# «ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԹԵՄԱ Երևան քաղաքի վարչական շրջանները
ԱՌԱՐԿԱ Հայոց պատմություն
ՀԵՂԻՆԱԿ Ստեփան Եփրեմյան
ՄԱՐԶ ԱՐԱԳԱԾՈՏՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Կանիաշիրի հիմնական դպրոց ՊՈԱԿ

ԱՐԱԳԱԾՈՏՆ- 2022

# Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 2
1. Պատմականորեն ստեղծված և ձևավորված վարչական շրջաններ…….. 3-4
2. Երևան քաղաքի վարչական շրջանների առանձնացումը…… 5
3. <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջանների աշխարհագրական դիրքը .....7-9
4. <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջանների բնակչության թիվը, շարժը, կազմը..... 10-14
5. <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջանների արդյունաբերության ճյուղերի տնտեսաաշխարհագրական բնութագիրը.....15-21
6. <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջանների տրանսպորտային ցանցի առանձնահատկությունները .....22-25
7. <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջանների պատմաճարտարապետական հուշարձանները, մշակութային արժեքները .....26-27
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....28
Օգտագործված գրականության ցանկ .....29

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքնչյուր երկրի արտաքին տեսքի կարևորագույն բաղադրամաս է հանդիսանում նրա մայրաքաղաքը: Մայրաքաղաքը արտացոլում է տվյալ երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային, կրոնական պատկերը: Ուստի նման պայմաններում Երևանի քաղաքի համալիր ուսումնասիրությունը հանդիսանում է շատ կարևոր և անհրաժեշտ խնդիր;

Այն Հայաստանի ամենամեծ, տնտեսապես ամենազարգացած քաղաքն է: Գտնվում է Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասում՝ Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում: Երևանը զբաղեցնում է 227 կմ² տարածք, հյուսիսից հարավ ձգվում է 19,7 կմ, իսկ արևմուտքից արևելք՝ 19,1 կմ: Ունի բարդ և կտրատված ռելիեֆ:

Քաղաքի տարածքով հոսում է Հրազդան գետը՝ իր չքնաղ կիրճով, նրա վտակ Գետառը, որի հոսքը կարգավորվում է մարդու կողմից՝ վարարումներից խուսափելու նպատակով:

Հայաստանի մայրաքաղաքը համարվում է աշխարհի հնագույն քաղաքներից մեկը: Հիմնադրվել է ն.ք. 782 թվականին ուրարտական արքա Արգիշտի Ա-ի կողմից և կոչվել է Էրեբունի:

Ներկայումս քաղաքի վարչական սահմանները սահմանված են <<ՀՀ վարչատարածքային բաժանման մասին >> (1995թ) օրենքով և արդյունավետ տեղական ինքնակառավարում և տարածքային կառավարում իրականացնելու. Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները բնակչության առավել մատչելի դարձնելու նպատակով Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր,Դավիթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ Զեյթուն:

Աշխատանքի շրջանակներում կանդրադառնամ Երևան քաղաքի <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջանների համալիր աշխարհագրական բնութագրին:

## 1. Պատմականորեն ստեղծված և ձևավորված վարչական շրջաններ:

Հայաստանի մայրաքաղաքը համարվում է աշխարհի հնագույն քաղաքներից մեկը: Հիմնադրվել է ն.ք. 782 թվականին ուրարտական արքա Արգիշտի Ա-ի կողմից և կոչվել է Էրեբունի: Հիմնադրման մասին վկայող փաստացի ապացույց է 1950 ականներին Երևանում՝ Արին-Բերդում կատարված պեղումների արդյունքում հայնաբերված արձանագրությունը, որի թարգմանությունը ասում է.

*Խալդի աստծո զորությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց և անվանեց Էրեբունի՝ ի հզորություն Բիայնիլի երկրի և ի սարսափ թշնամի երկրների: Հողը ամայի էր, ձեռնարկեցի այստեղ հզոր գործեր…*[1]

Մեկ դար անց Ռուսա Բ արքան Հրազդան գետի ափին՝ Երևանի հարավային մասում, հիմնադրում է մի նոր բերդաքաղաք, որը Վանի թագավորության Թեյշեբա աստծու անունով կոչվեց Թեյշեբաինի: Այն նշանավոր ռազմական կենտրոն էր տերության հյուսիսային հատվածում, ուներ միջնաբերդ, քաղաքային թաղամասեր: Բերդից հարա տնկվել էին խաղողի այգիներ: Թեյշաբաինին ավերվել է սկյութների կողմից Վանի թագավորության կործանման տարիներին՝ ն.ք. 585 թվականին:

Վանի թագավորության անկումից հետո քաղաքը դադարեց նշանկալից լինել և մոռցության մատնվեց պատմագիրների կողմից: Հետագա դարերում Երևանը հիշատակվում է շատ հազվադեպ և նշվում է որպես փոքր բնակավայր, որը աստիճանաբար զարգանալով արդեն 14-րդ դարում դառնում է Երևանյան Կուսակալության, պարսկական տիրապետության ժամանակ Երևանյան Խանության կենտրոնը: Այդ ժամանակ կառուցվեց Երևանի Բերդը՝ խանի նստավայր:

Ռուսական տիրապետության ժամանակ, որը սկսվեց 1827 թվականի հոկտեմբերի 1-ին Երևանի Բերդի գրավմամբ, քաղաքը ուներ մոտ 30 կմ շրջագիծ և բաղկացած էր երեք մասերից, որոնք կրում էին Կոնդ, Բուն քաղաք (Շահար) և Քարհանք անունները:

Ինչպես ցույց է տվել մեր պատմությունը օտար նվաճողները գրավելով Հայաստանը, ամենուրեք փորձել են ջնջել հայկական ծագում ունեցող ամեն ինչ՝ բնակչությունից սկսած մինչև տեղանուններ: Փոխվել էին նաև Երևանի պատմական թաղամասերի անվանումները՝ Բուն քաղաքը դարձել էր Շահար, իսկ Քարհանքը՝ Դամբռ-Բուլաղ:

[1] Արգիշտի Ա սեպագիր արձանագրություն

Քաղաքի առաջին հատակագիծը կազմվել է 18-րդ դարում և արտացոլել է այդ ժամանկավա քաղաքի պատկերը: Պահպանվել է նաև 1906-1911թթ Բորիս Մեհրաբյանի կողմից ստեղծված հատակագիծը Երևանի Պատմության թանգարանում:

Հաջորդ գլխավոր հատակագիծը 1924 թվականին ստեղծեց ականավոր գիտնական, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը: Նրա նախագծած քաղաքը ուներ դեպի շրջանաձև կենտրոն ձգվող ճառագայթաձև տեսքը: Ա.Թամանյանի նախագիծը նախատեսված էր սահմանափակ քանակով բնակչության համար և ուներ նախագծային կանոնակարգված տեսք: Այդ ժամանակ քաղաքը ներառում էր պատմական մի քանի թաղեր, որոնց թիվը աստիճանաբար ավելացավ և քաղաքը ընդհարձակվելով դուրս եկավ Ա. Թամանյանի սահմանագծած և կառուցապատած Երևանի սահմաններից:

Երևանի պամական թաղամասերից են՝ բուն քաղաքը՝ Շահարը, շուկան՝ Ղանթարը (պարսկերեն՝ կշեռք), Կոնդը կամ Ծիրանի թաղը, Զորաղբյուրը, Նորքը, Շեն թաղը, Բուլվարը, Բերդը: 1863 թվականին Երևանում բացվեց Աստաֆյան փողոցը, որը դարձավ քաղաքի կենտրոնական փողոցը:

Երևանի, ինչպես ողջ հայ ժողովրդի համար շրջադարձային էր XX դարի առաջին քառորդը, երբ թուրքական յաթաղանին զոհ գնացին միլիոն ու կես հայ, հազարավորները զրկվեցին իրենց տներից ու սփռվեցին աշխարհով մեկ: Մեր մազապուրծ հայրենակիցներից շատերը անցնելով Արաքսը իրենց հանգրվանը գտան Արարատյան դաշտում և Երևանում:

Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից եկած մարդիկ Երևանի շրջակայքում կառուցեցին նոր բնակավարեր, որոնք անվանակոչվեցին ի պատիվ հայրենի բնակավայրերի, հաճախ ստանալով <<Նոր>> նախդիրը: Հետագայում <<Նոր>> բառը գրեթե վերացվեց և պահպանվեցին մեր պատմական տեղանունները, որոնք նոր կյանք ու իմաստ ստացան: Այդպիսի թաղամասեր դարձան Արաբկիրը, Բութանիան, Մալաթիան, Սեբաստիան, Կիլիկիան, Մարաշը, Կամարակը, Զեյթունը: Քաղաքին միացան նաև Քանաքեռ, Ավան, Շոռբուլաղ, Վերին Ջրաշեն, Նուբարաշեն, Նոր Արեշ, Խարբերդ, Նորագավիթ, Չարբախ, Հաղթանակ, Դավիթաշեն գյուղերը:

## 2. Երևան քաղաքի վարչական շրջանների առանձնացումը

Խորհրդային կարգերի ժամանակ Երևանը վարչատարածքային առումով բաժանվում էր 8 շրջանների՝ Լենինյան, Մաշտոցի, Մյասնիկյան, Շահումյան, 26 Կոմիսարների անվան, Սովետական, Սպանդարյանի, Օրջոնիկիձեի: Հայաստանի անկախության հռչակումից հետո Երևանը ենթարկվեց նոր վարչատարածքային բաժանման և ձևավորվեցին նոր վարչական միավորներ:

Ներկայումս քաղաքի վարչական սահմանները սահմանված են <<ՀՀ վարչատարածքային բաժանման մասին >> (1995թ) օրենքով և արդյունավետ տեղական ինքնակառավարում և տարածքային կառավարում իրականացնելու. Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները բնակչության առավել մատչելի դարձնելու նպատակով Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝

1. Աջափնյակ
2. Ավան
3. Արաբկիր
4. Դավիթաշեն
5. Էրեբունի
6. Կենտրոն
7. Մալաթիա-Սեբաստիա
8. Նոր Նորք
9. Նորք-Մարաշ
10. Նուբարաշեն
11. Շենգավիթ
12. Քանաքեռ Զեյթուն

## 3. Երևան քաղաքի <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջանների աշխարհագրական դիրքը

Էրեբունի վարչական շրջան

Քարտեզ 2

Տարածքը՝ 4,850 հա

Բնակչությունը՝ 121,500 մարդ

Երևանի ամենամեծ համայնքն է: էրեբունի համայնքը Երևանի հարավ-արևելյան մասում է՝ ընդգրկելով Սարի Թաղ թաղամասը, "Վարդավառ" զբոսայգին, հին Գաջի գործարանը, քաղաքային երկու գերեզմանոցները, Էրեբունու հուշարձանը, Վարդաշեն և Էրեբունի թաղամասերը, "Մսի կոմբինատ" արդյունաբերական շրջանը և "Երևան" կայարանի երկաթուղային տնտեսության տարածքները: Ընդհանուր սահմաններով մոտ է Երևանի Կենտրոն, Նորք-Մարաշ, Նուբարաշեն և Շենգավիթ համայնքներին: Արտաքին սահմանագծով կից է Կոտայքի և Արարատի մարզերին: Համայնքի կազմում են նախկին երկու գյուղական բնակավայրը՝ այժմյան Զրաշեն և Մուշական թաղամասերը: էրեբունին հնագույն բնակատեղի է: Այստեղ՝ Արին-Բերդի բլրի վրա, Քրիստոսից առաջ 782-ին Արգիշտի արքան հիմնադրել է «էրեբունի» բերդ ամրոցը, որը էլ ներկայիս Երևանի հիմքն է:

XX դարի սկզբին էրեբունին բուռն ծաղկում ապրեց, երբ Երևանը հռչակվեց Հայաստանի մայրաքաղաք:

1996-ին էրեբունու շրջանը վերակազմավորվեց որպես Երևան քաղաքի էրեբունի համայնք:

Շենգավիթ վարչական շրջան

Քարտեզ 3

Տարածքը՝ 4,099 հա

Բնակչությունը՝ 146,700 մարդ

Երևանի Շենգավիթ համայնքն ունի շուրջ 6000-ամյա պատմություն:

Շենգավիթ համայնքը Երևանի հարավ-արևմտյան մասում է, Հրազդան գետի ձախ ափին: Շենգավիթ պատմամշակութային հուշարձանի պեղումների ժամանակ հայտնաբերվել է Քրիստոսից առաջ IV-II հազարամյակի հնէաբանական նյութեր, որոնք ապացուցում են, որ Շենգավիթը եղել է Հայաստանի հնագույն ու ճարտարապետական կատարյալ կառույցներից մեկը: Այն հիշեցնում է Միջագետքի, Իրանի (Պերսեպոլիս), Փոքր Ասիայի (առաջին Տրոյա) հնագույն հուշարձանները:

Ուշագրավ է Կարմիր Բլուրը, որն ուշ բրոնզի դարի (Քրիստոսից առաջ II հազարամյակ) քաղաքատեղի դամբարանադաշտ է: Այն ներկայացնում է պատմական մեծ արժեք:

Ընդգրկում է Ներքին Շենգավիթ, Վերին Շենգավիթ, Ներքին Չարբախ, Վերին Չարբախ, Նորագավիթ, Աերացիա տարածքները: Սահմանակից է Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա և Կենտրոն համայնքներին և Արարատի մարզին:

Գլխավոր փողոցներն, հրապարակներն, զբոսայգիներին են՝

. Գարեգին Նժդեհի

. Շիրակի փողոց

. Բագրատունյաց փողոց

. Արշակունյաց պողոտա

. Գարեգին Նժդեհի հրապարակ

. Կոմիտասի անվան պանթեոն

Նուբարաշեն վարչական շրջան

Քարտեզ 4

Տարածքը՝ 1,731

Բնակչությունը՝ 9,600 մարդ

Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1,315 մ

Նուբարաշեն, Հայաստանի մայրաքաղաք Երևանի վարչական շրջաններից մեկը։ Ընդհանուր սահմաններ ունիէրեբունի և Շենգավիթ վարչական շրջանների հետ։ Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին։

Համայնքն անվանվել է ի պատիվ մեծ բարերար և բարեգործ Պողոս Նուբարի։ 1930 թվականին Ֆիլադելֆիայի ժողովը միաձայն որոշում է Լոնդոնում կազմակերպել հանգանակություն և կուտակած գումարով Հայաստանում կառուցել ավան՝ ի պատիվ Պողոս Նուբարի՝ հայ ժողովրդին իր անձնուրաց նվիրման համար և այդ ավանը անվանում են Նուբարաշեն։ Պողոս Նուբարը ուրախությամբ միանում է նախաձեռնությանը և տալիս 100,000 ԱՄՆ դոլար։ 1931 թվականին հայ ականավոր ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը կազմում է Նուբարաշենի հատակագիծը և անձամբ հետևում շինարարությանը։

1932 թվականին հիմնվում է Նուբարաշենը, որտեղ Հունաստանից, Բուլղարիայից, Ֆրանսիայից, Լիբանանից, Սիրիայից ներգաղթածներ են բնակություն հաստատում։ Ստալինյան բռնապետության տարիներին (1938) Նուբարաշենը վերանվանվել է Սովետաշեն։ 1990 թվականին թաղամասի բնակչության պահանջով, ՀԽՍՀ գերագույն խորհրդի որոշմամբ Սովետաշենը վերստին ստանում է իր նախկին անվանումը՝ Նուբարաշեն։

## 4. <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջանների բնակչության թիվը, շարժը, կազմը

Երևանում անցկացվել է 15 մարդահամար: Վերջին երկուսը անցկացվել են ՀՀ անկախության շրջանում՝ 2001 թ. և 2011 թ.:

Աղյուսակ 1

**Երևանի բնակչ ությունն ը վերջին 500 տարում**

(չն դառելով Եր ևանի բերդը)

| Տարի | հայ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | | | | | | | | |
| 1830 | 3,937 | 34,3% | 7,331 | 63.9% | | | 195 | 1.7% | **11,463** |
| 1873 | 5,959 | 49.9% | 5,805 | 48.6% | 150 | 1.3% | 24 | 0.2% | **11,938** |
| 1897 | 12,523 | 43.2% | 12,359 | 42.6% | 2,765 | 9.5% | 1,359 | 4.7% | **29,006** |
| 1926 | 59,838 | 89.2% | 5,216 | 7.8% | 1,401 | 2.1% | 666 | 1% | **67,121** |
| 1939 | 174,484 | 87.1% | 6,569 | 3.3% | 15,043 | 7.5% | 4,300 | 2.1% | **200,396** |
| 1959 | 473,742 | 93% | 3,413 | 0.7% | 22,572 | 4.4% | 9,613 | 1.9% | **509,340** |
| 1970 | 738,045 | 95.2% | 2,721 | 0.4% | 21,802 | 2.8% | 12,460 | 1.6% | **775,028** |
| 1979 | 974,126 | 95.8% | 2,341 | 0.2% | 26,141 | 2.6% | 14,681 | 1.4% | **1,017,289** |
| 1989 | | | | | | | | | **1,201,539** |
| 2001 | 1,088,389 | 98.6% | | | 6,684 | 0.6% | 8,415 | 0.8% | **1,103,488** |
| 2011 | 1.048.940 | 98,8% | | | 4,940 | 0,47% | | | **1,060,138** |

Առաջին մարդահամարը անցկացվել է Երևանը ազատագրելուց հետո, երբ քաղաքում մեծ էր մուսուլմանների՝ պարսիկների, թուրքերի ու քրդերի թիվը:

Իրանի հայկական գավառներից Երևան տեղափոխված հայության մեջ որոշակի թիվ էին կազմում ասորիները, իսկ Արևմտյան Հայաստանից տեղափոխվածների մեջ՝ հույները: 1880-ական թվականներին Երևանի նահանգ, մասնավորապես՝ Երևան են տեղափոխվում բազմաթիվ ռուսներ:

Հայերի տոկոսը Երևանում ավելանում է հատկապես Երևանի՝ մայրաքաղաք հռչակվելուց հետո: Այդուհանդերձ, մուսուլմանական բնակչության թիվը չի գերազանցել 5-6 հազարը:

Քաղաքակենտրոնացումն ուղեկցվել է բնակչության թվի բնական և արհեստական արագ աճով: Արհեստական աճին նպաստել են նաև հայերի ներհոսքը ԽՍՀՄ նախկին հանրապետություններից և արտերկրից հայության կազմակերպված զանգվածային հայրենադարձությունը (1921-1936, 1946-1949, 1962-1982): Հայրենադարձներին տեղավորելու համար Երևանում կառուցվել են Արևմտյան Հայաստանի բնակավայրերի անուններով թաղամասեր (Նոր Արաբկիր, Նոր Սեբաստիա, Զեյթուն, Նոր Մալաթիա, Կիլիկիա, Նոր Արեշ և այլն): 1950-ական թվականների վերջից կառուցվել են նաև բնակելի նոր զանգվածներ (Աջափնյակ, Նոր Նորք, Ավան-Առինջ, Ղավթաշեն, Էրեբունի, Շենգավիթ և այլն): 1978 թ. ծնվել է Երևանի միլիոներորդ բնակիչը: Երևանը դառնում է աշխարհի միլիոնանոց քաղաքներից մեկը և բնակչության մեծությամբ ընդգրկվում առաջին հարյուրակում: 1989թվականի մարդահամարի տվյալներով քաղաքի բնակչությունը 1,219 միլիոն էր: Այն առավելագույնին է հասնում ադրբեջանահայերի բռնագաղթից և անկախության հռչակումից հետո՝ շուրջ 1.350.000 (ՀԽՍՀ բնակչության ավելի քան 38%-ը):

1990-ական թվականներին սոցիալ-տնտեսական դժվարությունների պատճառով հարյուրհազարավոր մարդիկ լքել են Երևանը, մեկնել արտասահման: Սակայն մայրաքաղաքի բնակչության նվազումը մասամբ չեզոքացվել է՝ ՀՀ մարզերից Երևան տեղափոխվածների և Ադրբեջանից փախստականների հաշվին:

2001 թվականի մարդահամարի տվյալներով՝ բնակչությունը Երևանում 1,088,389 էր (տղամարդիկ՝ 46,54%, կանայք՝ 53,46%) կամ ՀՀ բնակչության 34,35%-ը, քաղաքային բնակչության՝ 53,4%-ը:

Երևանի մշտական բնակչության թիվը, 2012 թվականի հունվարի 1-ի տվյալներով, 1127,3 միլիոն էր (ՀՀ բնակչության 34,4%-ը), որի 98,6%-ը հայեր են, 0,6%-ը՝ռուսներ, 0,4%-

ը՝ եզդիներ, 0,4%-ը՝ այլ ազգեր: Բնական հավելաճի և միգրացիայի հետևանքով Երևանի բնակչությունը 2010 թվականին աճել է 5,3 հազարով կամ 0,5%-ով:

Աղյուսակ 2




Աղյուսակ 3

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿ ԸՍՏ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ [1]

## NUMBER OF POPULATION BY DISTRICT COMMUNITIES OF YEREVAN CITY [1]

*Հունվարի 1-ի դրությամբ, հազ.մարդ*

*As of January 1, thousand persons*

| Վարչական շրջանների անվանումը | Բնակչության թվաքանակը Number of population | | | | District community name |
|---|---|---|---|---|---|
| | 2012 | 2013 | 2014 | 2015 | |
| Ք. ԵՐԵՎԱՆ, ընդամենը | 1 061.0 | 1 066.3 | 1 068.3 | 1 071.5 | YEREVAN CITY, total |
| ԱՋԱՓՆՅԱԿ | 108.4 | 108.7 | 108.8 | 108.9 | AJAPNYAK |
| ԱՎԱՆ | 53.2 | 53.3 | 53.1 | 53.1 | AVAN |
| ԱՐԱԲԿԻՐ | 117.6 | 117.2 | 116.7 | 116.2 | ARABKIR |
| ԴԱՎԹԱՇԵՆ | 42.4 | 42.5 | 42.5 | 42.5 | DAVTASHEN |
| ԷՐԵԲՈՒՆԻ | 123.3 | 124.4 | 125.0 | 125.8 | EREBUNI |
| ԿԵՆՏՐՈՆ | 125.5 | 126.0 | 125.8 | 125.8 | KENTRON |
| ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ | 133.0 | 133.7 | 134.4 | 135.2 | MALATIA-SEBASTIA |
| ՆՈՐ ՆՈՐՔ | 126.3 | 127.4 | 128.4 | 129.5 | NOR NORK |
| ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ | 12.0 | 12.0 | 11.9 | 11.9 | NORK-MARASH |
| ՆՈՒԲԱՐԱՇԵՆ | 9.6 | 9.7 | 9.7 | 9.8 | NUBARASHEN |
| ՇԵՆԳԱՎԻԹ | 135.8 | 137.2 | 137.8 | 138.6 | SHENGAVIT |
| ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ | 73.9 | 74.2 | 74.2 | 74.2 | KANAKER-ZEYTUN |

Էրեբունի վարչական շրջանն ունի 126 100 բնակիչ:

Շենգավիթ վարչական շրջանն ունի 135 535 բնակիչ:

Նուբարաշեն վարչական շրջանն ունի 9 561 բնակիչ:

Աղյուսակ 4

| | Ծնունդ-ներ Births | Մահա-ցածներ Deaths | Մինչև 1 տարեկան մահացածներ Deaths under 1 year | Բնական աճ (+,-) Natural growth (+,-) | Ամուսնու-թյուններ Marriages | Ամուսնալու-ծություններ Devorces |
|---|---|---|---|---|---|---|
| | 2012 | | | | | |
| Ք. ԵՐԵՎԱՆ, ընդամենը YEREVAN CITY, total | 15 612 | 9 032 | 119 | 6 580 | 7 118 | 1 479 |
| ԱՋԱՓՆՅԱԿ AJAPNYAK | 1 296 | 877 | 7 | 419 | 606 | 91 |
| ԱՎԱՆ AVAN | 517 | 358 | 6 | 159 | 570 | 34 |
| ԱՐԱԲԿԻՐ ARABKIR | 1 025 | 1 258 | 10 | -233 | 747 | 216 |
| ԴԱՎԹԱՇԵՆ DAVTASHEN | 411 | 247 | 4 | 164 | 217 | 16 |
| ԷՐԵԲՈՒՆԻ EREBUNI | 2 226 | 1 187 | 15 | 1 039 | 821 | 152 |
| ԿԵՆՏՐՈՆ KENTRON | 1 478 | 950 | 13 | 528 | 715 | 181 |
| ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ MALATIA-SEBASTIA | 2 338 | 1 044 | 16 | 1 294 | 957 | 204 |
| ՆՈՐ ՆՈՐՔ NOR NORK | 2 454 | 1 018 | 13 | 1 436 | 918 | 270 |
| ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ NORK-MARASH | 115 | 132 | 3 | -17 | 65 | 11 |
| ՆՈՒԲԱՐԱՇԵՆ NUBARASHEN | 174 | 55 | 2 | 119 | 73 | 9 |
| ՇԵՆԳԱՎԻԹ SHENGAVIT | 2 590 | 1 234 | 26 | 1 356 | 996 | 229 |
| ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ KANAKER-ZEYTUN | 988 | 672 | 4 | 316 | 433 | 66 |

5. <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջանների արդյունաբերության ճյուղերի տնտեսաաշխարհագրական բնութագիրը:

Երևանը համարվում է Հայաստանի տնտեսական կենտրոնը, այստեղ են կենտրոնացված գործարանների, ձեռնարկությունների մեծ մասը:

1975 թվականին քաղաքում գործում էր 200 խոշոր և միջին արդյունաբերական ձեռնարկություններ: Գործում էին բազմաթիվ թեթև և սննդի արդյունաբերական, մեքենաշինական, հաստոցաշինական, քիմիական և այլ ոլորտի գործարաններ: Խոշորագույն ձեռնարկություններն են Նաիրիտն ու Պոլիվինիլացետատը: Դրանք հումքով էին ապահովում շատ այլ գործարանների: Երևանում էլեկտրաէներգիա ապահովող ջրային էլեկտրակայանների կողքին բացվում է Երևանի ջերմային էլեկտրակայանը, որն աշխատում է բնական գազով: Այն հանրապետության խոշորագույն էլեկտրակայանն է՝ Հրազդանի ջերմաէլեկտրակայանից ու Մեծամորի ատոմակայանից հետո: Երևանում բացվել է նաև ավտոմեքենաշինական գործարան՝ ԵրԱԶ, որը մարդատար ավտոմեքենաներ է արտադրել ԽՍՀՄ վերջին տարիներին:

Շրջափակման և արտաքին շուկայի հետ կապերի խզման պատճառով շատ գործարաններ դադարեցին աշխատել: Գրեթե չեն գործում թեթև արդյունաբերության և մեքենաշինության գործարանները: Հիմնականում գործում են սննդի, խմիչքի, ծխախոտի, հրուշակեղենի, պահածոների գործարաններն ու ֆաբրիկաները: Որոշ ներդրում ունեն նաև փոքր և միջին բիզնեսի ձեռնարկություններն ու արտադրությունները:

Ցարական ժամանակներից Երևանում հիմնվել էին գինու և կոնյակի գործարաններ: Հայկական կոնյակը ավելի մեծ ճանաչում ստացավ ԽՍՀՄ տարիներից սկսած՝ Երևանի Արարատ կոնյակի գործարանի շնորհիվ: Հիմնվում են նաև բնական հյութերի, քաղցրավենիքի և սննդի այլ արդյունաբերական հիմնարկ-ձեռնարկություններ, կոմբինատներ:

2011 թվականի տվյալներով մայրաքաղաքի արդյունաբերության տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ի կառուցվածքում շուրջ 52,0% է. այստեղ են արտադրական հզորությունների գրեթե կեսը, շինարարական ոլորտի 88,0%-ը, թողարկվում է արդյունաբերական արտադրանքի 49,0%-ը (մշակող արդյունաբերության 61,0%-ը),

իրականացվում է մանրածախ ապրանքաշրջանառության 84,0%-ը, հանրային ծառայությունների՝ 91,0%-ը, այդ թվում՝ հյուրանոցային ծառայությունների՝ 89,9%-ը, տրանսպորտային ծառայությունների՝ 89,1%-ը, ֆինանսական գործունեության՝ 97.0%-ը, անշարժ գույքի հետ կապված գործառույթների՝ 87,0%-ը, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի ծառայությունների՝ 99,0%-ը, արտահանման՝ 52,0%-ը, ներմուծման՝ 82,0%-ը:

Երևան քաղաքի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքի մեջ զգալի բաժին է կազմում մշակող արդյունաբերությունը՝ 86,0 %, իսկ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունն ու բաշխումը և հանքագործական արդյունաբերությունը՝ համապատասխանաբար՝ 13,1% և 0,9%:

Մշակող արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում սննդամթերքի տեսակարար կշիռը 42,3% է, պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությանը՝ 4,25%, հրատարակչական և պոլիգրաֆական գործունեությանը՝ 4,16%, քիմիական արդյունաբերությանը՝ 3,87%, ծխախոտի արտադրատեսակների արտադրությանը՝ 2,9%:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների

Աղյուսակ 5

| | Թողարկված արտադրանքի ծավալը ընթացիկ գներով Մլն դրամ | Պատրաստի արտադրանքի իրացումը ընթացիկ գներով Մլն դրամ | Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքս % |
|---|---|---|---|
| Ք. Երևան ընդհամենը | 539 219.9 | 539 823.2 | 104.7 |
| Աջափնյակ | 21 364.4 | 22 774.8 | 99.4 |
| Ավան | 10 568.8 | 10 612.0 | 101.4 |
| Արաբկիր | 61 948.0 | 63 398.3 | 101.1 |
| Դավիթաշեն | 6 615.1 | 60 52.7 | 121.1 |
| Էրեբունի | 81 118.2 | 80 626.4 | 105.6 |
| Կենտրոն | 67671.5 | 69053.7 | 83.2 |
| Մալաթիա- Սեբաստիա | 70920.2 | 70630.7 | 111.7 |
| Նոր-Նորք | 14871.6 | 15000.2 | 108.7 |
| Նորք- Մարաշ | 1495.5 | 1498.5 | 65.0 |
| Նուբարաշեն | 985.2 | 853.6 | 58.4 |
| Շենգավիթ | 129259.9 | 126214.5 | 115 |
| Քանաքեռ-Զեյթուն | 26424.1 | 26230.4 | 104.1 |

Էրեբունի վարչական շրջանում գործում են 37 արդյունաբերական ձեռնարկություն, 15 շինարարական կազմակերպություն, 20 տրանսպորտային կազմակերպություն, առևտրային և սպասարկման ավելի քան 700 օբյեկտ: Էրեբունի վարչական շրջանում են

գտնվում հին Գաջի գործարանը, "Մսի կոմբինատը" և "Երևան" կայարանի երկաթուղային տնտեսության տարածքները։

Մսի կոմբինատը Հայաստանի մսեղենի և կաթնեղենի արդյունաբերության մինիստրության ձեռնարկություն է ։ Հիմնադրվել է 1932 թվականին։ 1959թվականին շահագործման է հանձնվել կոմբինատի նոր համալիրը։ Ունի մսաճարպային մասնաշենք, երշիկեղենի, թռչնաբուծական մթերքի արտադրամասեր, սառնարան, սպանդի, տեխնիկական ֆաբրիկատների, աղիքի, ենթամթերքների, կիսաֆաբրիկատների, ոսկրից մսի անջատման, խճողակման և այլ տեղամասեր։ Արտադրում է երշիկեղենի 75, կիսաֆաբրիկատների 20 տեսակ, վերամշակում ավելի քան 50 անուն մսամթերք։ 1932 թվականին համախառն արտադրանքի ծավալը կազմել է 1,9 1959 թվականին՝ 12, 1975 թվականին՝ 57,8 միլիոն ռուբլի։ Արտադրանքն իրացվում է ՀԽՍՀ-ում։ 1973 թվականին ու 1974 թվականին ԽՍՀՄ ԺՏՆՑ-ում «բաստուրման» և «կծու երշիկը» ստացել են բրոնզե մեդալ։

Նուբարաշեն վարչական շրջանում են գտնվում գտնվում են կարի, սպասարկման ոլորտի մի շարք ձեռնարկույուններ շինանյութի, հանրային սննդի և
զվարճանքի 3 օբյեկտ և սննդի 3 արտադրամաս (հացի փուռ)։

Շենգավիթ վարչական շրջանում են գտնվում այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք են Նաիրիտը, Հայէլեկտրոն, Սահակյանշինը, Արմեն-Կարպետը, Գրանդ Տոբակո, Գրանդ Քենդի, «Արաքս Գոլդ», «Երևանի ՋԷԿ» Երևանի <<Արևելյան քաղցրավենիքի>> կոմբինատը և այլն։

Անդրանդառնանք առավել խոշոր մի քանի ձեռնարկությունների.

1. Նաիրիտ, արհեստական կաուչուկ արտադրող գործարան Երևանում, հիմվել է Խորհրդային Միությունում 1940 թվականին, և նախկին ԽՍՀՄ երկրների և ներքին շուկային մատակարարել է մոտ 34 տեսակի քիմիական արտադրանք։ Այժմ Նաիրիտը Անկախ պետությունների համագործակցության և Արևելյան Եվրոպայի երկրներում քլորոպրենային կաուչուկների և լատեքսների միակ արտադրողն է։ Նաիրիտը հիմնվել է 1940 թվականին, Խորհրդային Հայաստանում։ 1989 թվականին, գործարանը փակվել է բնապահպանական նկատառումներով։ Գործարանը մասամբ վերագործարկվել է 1992 և 1993 թվականներին։

2006 թվականի օգոստոսի 18-ին Ռայնովիլ Փրոփերթի Լիմիթիդ միջազգային ընկերությունը 40 միլիոն դոլարով գնել է Նաիրիտ Գործարանի 90% բաժնետոմսերը: Ընկերությունը հիմնվել է լեհական Սամեքս, ամերիկական Ինտերտեքս և ըստ մի աղբյուրի ռուսական Եվրոգազ[], իսկ ըստ մի այլ աղբյուրի մի գերմանականընկերության կողմից, հատուկ այս գործարքի համար: Գործարանի բաժնետոմսերի մնացյալ 10%-ը պատկանում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության: 2007 և 2008 թթ. գործարանը կաուչուկի արտադրանքը համեմատած նախկին երեք տարվա հետ ավելացրել է 20.6%-ով: 2008 թ. նոյեմբեր 1-ի դրությամբ գործարանում աշխատում էր 2742 մարդ: 2008 թ. դեկտեմբերի 1-ին, Նաիրիտը աշխատանքը դադարեց ֆինանսական ճգնաժամի պատճառով, և մոտ 1500 աշատողներ աշխատանքից ազատվեցին: 2013 թ. «Նաիրիտ» գործարանի աշխատակիցների խնդրով զբաղվում է ԿԱՄՔ քաղաքացիական շարժումը: «Նաիրիտ» գործարանի վերագործարկման և աշխատակիցների աշխատավարձերին վերաբերվող որևէ պաշտոնական տեղեկատվություն չներկայացվեց, այդ իսկ պատճառով փետրվարի 12-ին ժամը 14:00-ին ԿԱՄՔ քաղաքացիական շարժումը կազմակերպեց ինքնաբուխ ցույց կառավարության շենքի դիմաց իսկ հետո նախագահականի դիմաց ինչից հետո վճարվեցին աշխատակիցների աշխատավարձերը:

2. "Գրանդ Քենդի" ընկերությունն այսօր Հայաստանի տեղական արտադրության ամենախոշոր ձեռնարկությունն է: Այն հիմնադրվել է 2000 թվականի սկզբին՝ Երևանի հրուշակեղենի գործարանի հիմքի վրա: Ձեռնարկության պատմությունը սկիզբ է առ 1933 թ-.ից, երբ Երևանի մակարոնի գործարանը պաշտոնապես սկսեց տարբեր արտադրատեսակների արտադրությունը: Մեկ տարի անց՝ 1934 թ.-ին, աշխատանքն սկսեց Երևանի հրուշակեղենի գործարանը: Հետագա 17 տարիների ընթացքում վերոնշյալ գործարաններն երկու անկախ արտադրություններ էին: 1951 թ. դրանք միավորվեցին, և ստեղծվեց Երևանի հրուշակեղենի և մակարոնի գործարանը, որը Սովետական Միության՝ այդ ժամանակաշրջանի ամենամեծ գործարաններից մեկն էր: Կարճ ժամանակահատվածում կառուցվեցին նոր արտադրատարածքներ, ձեռք բերվեցին նոր հոսքագծեր՝ կարամելի, թխվածքաբլիթների, շոկոլադի արտադրության և կակաո հատիկավորի մշակման համար: Հսկայածավալ վերանորոգումից և վերականգնողական աշխատանքներից հետո, 2000թ. ապրիլին "Գրանդ Քենդի"-ն տալիս է իր առաջին արտադրանքը և անմիջապես գրավում տեղական շուկան:

Այժմ "Գրանդ Քենդի"-ն Հայաստանում հրուշակեղենի խոշորագույն արտադրողներից է, ինչպես նաև կակաոի վերամշակմամբ զբաղվող միակ ձեռնարկությունն Անդրկովկասում:

Ընկերության լաբորատորիայի և որակի վերահսկման ծառայության կողմից իրականացվող մշտական ստուգումներն ապահովում են արտադրանքի բարձր և կայուն որակը: Պրոֆեսիոնալ և ինքնամոռաց աշխատանքի շնորհիվ "Գրանդ Քենդի" անունն այսօր Հայաստանում բարձր որակի և գերազանց համի երաշխիք է դարձել:

3. «Երևանի ՋԷԿ» ձեռնարկությունը հիմնադրվել է 1963 թվականին: 1997 թվականին ստեղծվել է «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերությունը: Երևանի ջերմաէլեկտրակենտրոնի նախագծման աշխատանքները սկսվել են 1959 թվականին Խորհրդային Միության «Տեպլոէլեկտրոպրոյեկտ» ինստիտուտի կողմից: Այն որոշվել է կառուցել Հայաստանի արդյունաբերական էներգատար կենտրոններից մեկում՝ Երևանի հարավային արդյունաբերական հանգույցում: Երևանի ջերմաէլեկտրակենտրոնի շինարարությունը սկսվել է 1961 թվականին: Երևանի ՋԷԿ -ի թվով յոթ տուրբոագրեգատներից առաջինը՝ 50 ՄՎտ հզորությամբ առաջին տուրբինային տեղակայանքը շահագործման է հանձնվել 1963 թվականին, իսկ վերջինը՝ 1967 թվականին: Փաստորեն, Հայաստանում մեծ ջերմաէներգետիկան ծնունդ է առել 1963 թվականին Երևանի ՋԷԿ-ի գործարկումով: Այդ ժամանակ Երևանի ՋԷԿ-ն իրենից ներկայացնում էր 300 ՄՎտ հզորությամբ բլոկային մասից (երկու K-150-130 կոնդենսացիոն տիպի էներգաբլոկներ, երկու ՏԳՄ-94 կաթսայական ագրեգատներ յուրաքանչյուրը 500 տ/ժ արտադրողականությամբ) և 250 ՄՎտ էլեկտրական և 630 ԳԿալ/ժ ջերմային հզորությամբ ոչ բլոկային մասից (չորս ՊՏ-50-130/13 և մեկ Ր-50-130/13 ջերմաֆիկացիոն տիպի տուրբիններ, հինգ ՏԳՄ-84 կաթսայական ագրեգատներ՝ յուրաքանչյուրը 420 տ/ժ արտադրողականությամբ) բաղկացած խառը տիպի կայան՝ ունենալով ընդհանուր առմամբ 7 ագրեգատ 550 ՄՎտ էլեկտրական և 630 ԳԿալ/ժ ջերմային հզորություն: Կառուցման ծախսերի նվազեցման նպատակով կատարվել էր եզակի նախագծային մոտեցում. ընտրվել էր բաց տիպի հարմարադասավորում, սակայն էլեկտրակայանի հետագա շահագործման ընթացքում պարզվեց, որ տեղի բնակլիմայական պայմաններում դա տնտեսապես աննպատակահարմար լուծում էր: Շահագործման մեջ լինելով ավելի քան 40 տարի՝

էլեկտրակայանի ագրեգատները և օժանդակ սարքավորումները ենթարկվել են ֆիզիկական և բարոյական էական մաշվածության՝ սպառելով իրենց աշխատանքային նորմատիվային պաշարները, որի հետևանքով բնականաբար զգալիորեն ընկել է կայանի շահագործման հուսալիությունը և էլեկտրական ու ջերմային էներգիայի արտադրության արդյունավետությունը: Բավական է միայն նշել, որ յուրաքանչյուր կվտժ էլեկտրաէներգիայի արտադրության համար կայանում ծախսվում էր մոտ 372 գրամ պայմանական վառելիք՝ պարտադրելով էլեկտրաէներգիայի բավականին բարձր ինքնարժեք:

## 6. <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջանների տրանսպորտային ցանցի առանձնահատկությունները:

Երևան քաղաքի բնակչության տրանսպորտային սպասարկումն իրականացվում է ավտոբուսներով, միկրոավտոբուսներով, տրոլեյբուսներով և մետրոպոլիտենով:

Երևանի քաղաքային հասարակական տրանսպորտի համակարգն իր մեջ ներառում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն», «Երևանի էլեկտրատրանսպորտ», «Երևանի ավտոբուս», «Երևանտրանս» ՓԲ ընկերությունները և թվով 58 մասնավոր կազմակերպություններ, որոնք պայմանագրային հիմունքներով կանոնավոր ուղևորափոխադրումներ են իրականացնում Երևանի ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներում:

Երթուղային ցանց

Երևանի քաղաքապետի 2012թ. մարտի 30-ի հ.2911-Ա որոշմամբ հաստատված Երևան քաղաքի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների նոր երթուղային ցանցը նպատակ է հետապնդել ամբողջովին վերանայելու Երևանի փոքր կենտրոնում ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացը, որոշակիորեն նվազեցնելու միկրոավտոբուսների քանակը, մեծացնելու մետրոպոլիտենի և տրոլեյբուսների դերը ներքա-ղաքային ուղևորափոխադրումներում, ինչպես նաև նախատեսելու ավտոբուսային նոր, արդյունավետ երթուղիներ:

2012 թվականից հետո ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետի որոշումներով առանձին երթուղիներում կատարվել են ուղեգծերի և շարժակազմի քանակների փոփոխություններ, դադարեցվել են մի քանի ավտոբուսային երթուղիների աշխատանքը և անհրաժեշտություն էր առաջացել մասնակիորեն վերանայելու ու լրամշակելու Երևանի քաղաքապետի 2012թ. մարտի 30-ի հ.2911-Ա որոշմամբ հաստատված Երևան քաղաքի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցը: Այն շարադրվել է նոր խմբագրությամբ և հաստատվել է Երևանի քաղաքապետի 2015 թվականի մարտի 11-ի հ.665-Ա որոշմամբ:

Նոր երթուղային ցանցով նախատեսված է 76 միկրոավտոբուսային (1568 միավոր շարժակազմ), 44 ավտոբուսային (593 միավոր շարժակազմ) և 10 տրոլեյբուսային երթուղի (108 միավոր շարժակազմ):

Ավտոբուսային փոխադրումներ

Երևան քաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրված է տարբեր մակնիշների 669 ավտոբուսով: Ավտոբուսային երթուղիները պայմանագրային հիմունքներով սպա-սարկվում են «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և 19 մասնավոր կազմակերպությունների կողմից:

Երևան քաղաքում փաստացի գործում են 39 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է 430-440 միավոր շարժակազմ: 2015թ. ավտոբուսային մի քանի երթուղիների սպասարկման դադարեցումից հետո որոշակիորեն նվազել է ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալը: Արդյունքում ավտոբուս-ներով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ներքաղաքային ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում դեռևս մնում է ցածր՝ կազմելով մոտ 35.0%:

Երևան քաղաքում դեռևս անբավարար է ավտոբուսային երթուղիների շահագործման արդյունավետությունը: Երթուղային ցանցում ներառված որոշ երթուղիներ չեն սպասարկվում, իսկ մի մասը համալրված է մասնակիորեն:

Մայրաքաղաքի բնակչության կանոնավոր տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար 2016թ. անհրաժեշտ է շարունակել աշխատանքները ավտոբուսային հավաքակազմը փոքր և միջին տեղատարողության քաղաքային ավտոբուսներով համալրելու և դրան զուգահեռ՝ միկրոավտոբուսների քանակի ա կրճատման ուղղությամբ:

Միկրոավտոբուսային փոխադրումներ

Երևան քաղաքում փաստացի գործում է 81 միկրոավտոբուսային երթուղի, որոնցից 5-ը նոր երթուղային ցանցով նախատեսված է փոխարինել ավտոբուսային երթուղիներով, սակայն անհրաժեշտ քանակի ավտոբուսներ չլինելու պատճառով դրանք ներկայում դեռևս սպասարկվում են միկրոավտոբուսներով: Միկրոավտոբուսային երթուղիները համալրված են տարբեր մակնիշների մոտ 1600 միկրոավտոբուսներով, օրական երթուղիներ է դուրս բերվում միջին հաշվով 1250-1260 միավոր շարժակազմ: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են 45 մասնավոր կազմակերպություններ:

Վերջին տարիներին միկրոավտոբուսների թվաքանակի կրճատման հետևանքով (մոտ 1000-ով) զգալիորեն նվազել է միկրոավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալը: Չնայած դրան, այսօր մայրաքաղաքում ուղևորափոխադրումների հիմնական մասը դեռևս իրականացվում է միկրոավտոբուսներով, որոնց բաժին է ընկնում ընդհանուր ծավալի մոտ 54.0%-ը:

Այս խնդրի լուծմանն ուղղված, նախատեսվում է 2016թ. ընթացքում ևս նվազեցնել փաստացի շահագործվող միկրոավտոբուսային երթուղիների քանակը (5-ով)՝ դրանք փոխարինելով ավտոբուսային երթուղիներով:

Երևանի ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների ընդհանուր գործընթացում ավտոբուսային փոխադրումների տեսակարար կշռի ավելացումը, միկրոավտոբուսային երթուղիները սպասարկող կազմակերպությունների քանակի կրճատումը, հնարավորություն կտան զգալիորեն բարելավելու մայրաքաղաքի բնակչության տրանսպորտային սպասարկման վիճակը և բարձրացնելու սպասարկման մակարդակը, ինչպես նաև նախադրյալներ կստեղծվեն հետագայում միասնական տոմսային համակարգի անցման գործընթացի և անկանխիկ վճարման միջոցների ներդրման համար:

Վերգետնյա էլեկտրատրանսպորտ

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է 79 տրոլեյբուս (1-ը՝ տեխօգնության) Ընկերության կողմից ներկայում սպասարկվում են 5 տրոլեյբուսային երթուղիներ, օրական գիծ է դուրս բերվում միջին հաշվով 45-48 միավոր շարժակազմ:

Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի գործունեության վերջին մի քանի տարի-ների վերլուծությունը ցույց է տվել, որ ավելացել է տրոլեյբուսներով տեղափոխվող

ուղևորների քանակը: 2015թ. ևս որոշակիորեն ավելացել է (0.5%-ով) տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների քանակը, և տեսակարար կշիռը ներքաղաքային ընդհանուր ուղևորափոխադրումներում կազմել է մոտ 2.6%:

Հաշվի առնելով քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի դերը ներքաղաքային ուղևորափոխադրումների ընդհանուր գործընթացում, այդ թվում՝ բնապահպանական խնդիրների տեսանկյունից և կարևորելով դրա հետագա զարգացման անհրաժեշտությունը՝ նոր երթուղային ցանցով ավելացվել է տրոլեյբուսային երթուղիների քանակը՝ հասցվելով 10-ի:

2016թ. նախատեսվում է շարունակել տրոլեյբուսների, հպակային և մալուխային ցանցերի, քարշի ենթակայանների հիմնանորոգման, հպակային ցանցի վերանորոգման, քարշի ենթակայանների վերակառուցման ու վերագործարկման, տրոլեյբուսային տնտեսության արտադրատեխնիկական վերազինման, ինչպես նաև տրոլեյբուսների շահագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Մետրոպոլիտեն

Երևանի մետրոպոլիտենում առկա է 45 վագոն: Աշխատանքային օրերին գիծ է դուրս բերվում 26 վագոն (13 շարժակազմ), իսկ շաբաթ և կիրակի օրերին՝ 24 վագոն (12 շարժակազմ): Ի սկզբանե կառուցման նախագիծը հաստատվել է որպես ստորգետնյա տրամվայի նախագիծ, սակայն հետագայում այն վերափոխվել է մետրոյի: Կառուցումն սկսվել է 1972 թվականին: Կայարաններից երեքը՝ Սասունցի Դավիթը, Գործարանային և Չարբախ կայարանները վերգետնյա են, մնացած յոթը՝ ստորգետնյա:

Ներկայումս մետրոյից օրական օգտնվում է 50-60 հազար մարդ:

Շենագվիթում են գտնվում 4 կայարաններ՝

1. Գործարանային
2. Սասունցի Դավիթ
3. Գարեգին Նժդեհ
4. Չարբախ

# 7. <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջանների պատմաճարտարապետական հուշարձանները, մշակութային արժեքները:

Երևան հազարամյակին մոտեցող մեր մայրաքաղաքը դարերի ընթացքում անընդհատ հարստացել ու շքեղացել է հազարավոր բարձրարժեք հաշարձաններով, շինություններով, պատմաճարտարապետական կոթողներով: Երևանի բոլոր անկյուններում՝ ամենաանկատ վայրերում հանդիպում ենք արժեքների, որոնք համաշխարհային մշակույթի գլուխգործոցներ են:

Էրեբունի վարչական շրջանն հարուստ է բազմաթիվ հուշարձաններով: Այստեղ են գտնվում քարե դարի Մուշավան բնակավայրը, 3-1 հազարամյակի բնակավայրեր, Երկաթուղային կայարան գեղեցիկ շենքը, <<Զինվորական գերեզմանոց>> հուշահամալիրը , <<Սասունցի Դավիթ>> հուշարձանը, <<Արին Բերդը>>, <<Էրեբունի>> թանգարանը:

Էրեբունի թանգարանը հիմնադրվել է 1968 թվականին: Թանգարանի բացումը համընկել է Երևան քաղաքի 2750-րդ ամյակի տոնակատարությունների հետ: Թանգարանը գտնվում է Արին Բերդը բլրի վրա, մի վայրում. Որտեղ ն.ք. 782-ին հիմնվել է ուրարատական Էրեբունի ամրոցը:

<<Սասունցի Դավիթ>> հուշարձանը տեղադրվել է 1959 թվականին Սասունցի Դավթի հրապարակում, երկաթուղային կայարանի առջև, փոխարինել է 1939 թվականից տեղադրված գիպսե տարբերակին: Դավթի մարմինը շարժման մեջ է՝ պատրաստ մարտի: Նրա հեքիաթային ձին՝ Քուռկիկ Ջալալին, ծառս է եղել հսկայական բազալտե ժայռի վրա: Սմբակների տակ, ժայռի անկյունում բրոնզե թասն է՝ հայ ժաղովրդի համբերության խորհրդանիշը: Քանդակը տեղադրված է 25 մետր տրամագծով ջրավազանի կենտրոնում և պատվանդանի հետ ընդհանուր բարձրությունը 12,5 մետր է: Արձանը բազմաթիվ անգամ պատկերվել բացիկների և ամսագրերի շապիկներին, բուկլետներում, լուսանկարներում, գրքերի նկարազարդումներում և ճամփորդական ուղեցույցներում՝ դառնալով Երևանի խորհրդանիշներից մեկը:

Նուբարաշեն վարչական շրջանում են գտնվում մի շարք պատմաճարտարապետական հուշարձաններ, որոնցից հատկապես հայտնի են Պողոս Նուբար Նուբարյանի կիսանդրին, Անհայտ զինվորի հուշարձանը, Ղևոնդ Ալիշանի կիսանդրին Չնքուշցիների հուշարձանը, Արցախյան շարժման ժամանակ զոհված ազատամարտիկների հիշատակին նվիրված խաչքարը:

Շենգավիթ վարչական շրջանում են գտնվում Նորագավթի սբ. Գևորգ եկեղեցական համալիրը, սբ. Գևորգ եկեղեցին, Կարմիր Բլուրը:

Հունան Ավետիսյանի Կիսանդրի, գտնվում է Երևանի Շենգավիթ համայնքում՝ Հունան Ավետիսյանի անվան թիվ 74 դպրոցի առջև: Հուշարձանը տեղադրվել է 1956 թվականին:

Ալեքսանդր Մյասնիկյանի կիսագնդի, գտնվում է Երևանի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան թիվ 66 հիմնական դպրոցի առջև: Հուշարձանը տեղադրվել է 1959 թվականին:

Մուրացանի կիսանդրի, գտնվում է Երևանի Շենգավիթ համայնքում՝ Մուրացանի անվան թիվ 18 դպրոցի առջև: Հուշարձանը տեղադրվել է 1955 թվականին:

Հուշարձան նվիրված Հայոց Ցեղասպանության 100 ամյանկին, գտնվում է Կոմիտասի անվան զբոսայգում, տեղադրվել է 2011թվականին: Հուշարձանը ներկայացնում է հայ կնոջ կերպարը, որն իր թևերի մեջ է համախմբում հայրենիքի և սփյուռքի հայերին, որոնք ներկայացված են կռունկների տեսքով և իրենց շրջանաձև թռիչքով պատկերում են հայ ժողովրդի միասնությունն ու մեկ ամբողջություն լինելու իրողությունը:

Կոմիտասի մահարձան, գտնվում է Երևանի Շենգավիթ համայնքում՝ Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում գտնվող նրա գերեզմանի վրա, տեղադրվել է 1955 թվականին: Գերեզմանը մահարձանով ընդգրկված է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Մահարձանը կառուցված է բրոնզից ու գրանիտից, բարձրությունը 2,4 մետր է:

Հայ մեծանուն կոմպոզիտոր Կոմիտասի մահարձանը դրվել է 1955 թվականին Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում գտնվող նրա գերեզմանի վրա:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծանոթանալով Երևան քաղաքին և նրա <<Էրեբունի>>, <<Շենգավիթ>>, <<Նուբարաշեն>> վարչական շրջաններին գալիս ենք հետևյալ եզրահանգումների՝

1. Այն Հայաստանի ամենամեծ, տնտեսապես ամենազարգացած քաղաքն է: Գտնվում է Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասում՝ Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում:
2. Ներկայումս քաղաքի վարչական սահմանները սահմանված են <<ՀՀ վարչատարածքային բաժանման մասին >> (1995թ) օրենքով և արդյունավետ տեղական ինքնակառավարում և տարածքային կառավարում իրականացնելու. Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները բնակչության առավել մատչելի դարձնելու նպատակով Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր,Դավիթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ Զեյթուն:
3. Էրեբունի վարչական շրջանը Երևանի ամենամեծ համայնքն է: էրեբունի համայնքը Երևանի հարավ-արևելյան մասում է՝ ընդգրկելով Սարի Թաղ թաղամասը, "Վարդավառ" զբոսայգին, հին Գաջի գործարանը, քաղաքային երկու գերեզմանոցները, Էրեբունու հուշարձանը, Վարդաշեն և Էրեբունի թաղամասերը, "Մսի կոմբինատ" արդյունաբերական շրջանը և "Երևան" կայարանի երկաթուղային տնտեսության տարածքները: Ընդհանուր սահմաններով մոտ է Երևանի Կենտրոն, Նորք-Մարաշ, Նուբարաշեն և Շենգավիթ համայնքներին: Արտաքին սահմանագծով կից է Կոտայքի և Արարատի մարզերին: Էրեբունի վարչական շրջանն ունի 126 100 բնակիչ: Էրեբունի վարչական շրջանում գործում են 37 արդյունաբերական ձեռնարկություն, 15 շինարարական կազմակերպություն, 20 տրանսպորտային կազմակերպություն, առևտրային և սպասարկման ավելի քան 700 օբյեկտ:
4. Երևանի Շենգավիթ համայնքն ունի շուրջ 6000-ամյա պատմություն: Շենգավիթ համայնքը Երևանի հարավ-արևմտյան մասում է, Հրազդան գետի ձախ ափին:

Ընդգրկում է Ներքին Շենգավիթ, Վերին Շենգավիթ, Ներքին Չարբախ, Վերին Չարբախ, Նորագավիթ, Աերացիա տարածքները։ Սահմանակից է էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա և Կենտրոն համայնքներին և Արարատի մարզին: Բնակչությունը կազմում է 135 535 մարդ։ Շենգավիթ վարչական շրջանում են գտնվում այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք են Նաիրիտը, Հայէլեկտրոն, Սահակյանշինը, Արմեն-Կարպետը, Գրանդ Տոբակո, Գրանդ Քենդի, «Արաքս Գոլդ», «Երևանի ՋԷԿ» Երևանի <<Արևելյան քաղցրավենիքի>> կոմբինատը և այլն:

5. Ընդհանուր սահմաններ ունի էրեբունի և Շենգավիթ վարչական շրջանների հետ։ Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին: Համայնքն անվանվել է ի պատիվ մեծ բարերար և բարեգործ Պողոս Նուբարի։

# Օգտագործված գրականության ցանկ


1. <<Երևան>> ժողովածու, Երևան, 2010թ,
2. Կ. Ավետիսյան <<Հայրենագիտական էտյուդներ >>, Երևան, 1979թ,
3. Ս. Մելքումյան <<Ընդհանուր տնտեսական աշխարհագրություն>>, Երևան, 2007թ,
4. Մ. Մանասյան <<ՀՀ տարաբնակեցման համակարգ>> Երևան, 2005թ,
5. erevan.am
6. wikipedia.org